

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հիմնաբառեր – բանկային գործունեություն, վարկային ստորաբաժանում, վարկավորման գործընթաց, ռիսկեր, համագործակցություն, հաճախորդ

Վարկավորման գործընթացի որակը և արդյունավետությունը կախված է առաջին հերթին այն բանից, թե ինչքան ճշտությամբ է այն կազմակերպված, հաշվի առնելով յուրաքանչյուր բանկի ֆունկցիոնալ առանձնահատկությունները՝ բանկի մեծությունը, կառուցվածքը, մասնագիտացումը և աշխատանքային պայմանները:

Գործնականում՝ հայաստանյան բանկերում վարկավորման գործընթացի կազմակերպումն իրականացվում է երեք մոտեցմամբ: **Առաջին մոտեցում**, երբ հաճախորդների հետ կապված գրեթե բոլոր աշխատանքները (նրանց հետ շփումը, ռիսկերի վերլուծությունը, վարկային փաստաթղթերի նախապատրաստումը) իրականացվում են վարկային մեկ ստորաբաժանման (բաժնի), մեծամասամբ դրա մեկ պատասխանատու աշխատակցի կողմից (հաշվի չառնելով, բնականաբար, հաշվապահությունն ու դրամարկը): Այսինքն, փաստացի մեկ մասնագետը անմիջականորեն սպասարկում է կոնկրետ վարկառուի վարկավորման ողջ գործընթացը սկսած բանակցություններից մինչև վարկի տրամադրում ու վերջինիս մարման վերահսկում: Այս մոտեցումը լայնորեն կիրառվում էր հայաստանյան և ԱՊՀ երկրների շատ բանկերում, հատկապես 1990-ականների սկզբներին: Մասնագետների մեծամասնության կարծիքով վարկավորման այսպիսի գործընթացի կազմակերպումը հնարավորություն չի տալիս իրականացնել վարկային ռիսկերի որակյալ վերլուծություն: Այնուամենայնիվ այս մոտեցումը հիմնականում արդարացնում է իրեն փոքր և միջին բանկերում:

Վարկային գործընթացի կազմակերպան **երկրորդ մոտեցումը**, որն օգտագործվում է, որպես կանոն, միջին և խոշոր բանկերում, նախատեսում է հաճախորդի հետ անմիջական աշխատանքների բաժանումը երկու բաժինների միջև՝ վարկային բաժին (նախնական ռիսկերի գնահատում, վարկային փաստաթղթերի կազմում) և ռիսկերի վերլուծության բաժին (առավել մանրամասն ռիսկերի գնահատում առանց հաճախորդի հետ շփման): Այս մոտեցումը տարբերվում է նախորդից նրանով, որ վարկավորման գործըն-

թացին «միացվում է» ռիսկերի կառավարման մասնագիտացված ստորաբաժանումը:

Երրորդ մոտեցումը, որը բնորոշ է խոշոր բանկերին, բնորոշվում է նրանով, որ վարկավորման գործընթացի կազմակերպմանը մասնակցում են բանկի տարբեր ստորաբաժանումներ, ներառյալ վերոնշյալ բաժինները:

Հայաստանում վարկային կազմակերպությունների գերակշիռ մասը աշխատում են առաջին մոտեցմամբ ամրագրված վարկավորման սկզբունքով, իսկ առևտրային բանկերի մեծամասնությունը՝ երկրորդ մոտեցմամբ: Առավել խոշոր բանկերը (Ամերիաբանկ, Արդշինբանկ, Ակբա Կրեդիտ Ազրիկոլ Բանկ) ունեն բարդ կառուցվածքով վարկային բաժին²:

Անկախ ընտրված մոտեցումից, վարկավորման գործընթացի կազմակերպումը պահանջում է պատասխանատվության հստակ ֆունկցիոնալ տարանջատում վարկային ստորաբաժանման աշխատողների, ինչպես նաև բանկի ղեկավարների, վարկային և այլ ստորաբաժանումների միջև, որոնց մասնակցությունը տվյալ գործընթացում պարտադիր է (տնտեսական պլանավորման, հաշվապահության, դրամարկային, իրավաբանական և այլ բաժիններ): Նույն վարկային ստորաբաժանումը կարող է կազմակերպվել տարբեր ձևերով: Ժամանակակից հայաստանյան ոչ խոշոր բանկերի մեծամասնության համար գոյություն ունի ստանդարտ տարբերակ, երբ վարկատու կազմակերպությունները ունենում են վարկային բաժին, որի աշխատակիցները անմիջականորեն աշխատում են վարկի համար դիմողների և փոխառուների հետ, միայն անհրաժեշտության դեպքում դիմելով հաշվապահական կամ իրավաբանական բաժին: Վարկավորման գործընթացի մնացած տարրերը այս դեպքում կամ առիասարակ բացակայում են, կամ իրականացվում են վարկային մասնագետների «համատեղությամբ»: Վարկային գործընթացի կազմակերպման զարգացած տարբերակը (որը սակայն չի կարող հասցվել միասնական, ունիվերսալ սխեմայի) նախատեսում է, որ բացի վարկային ստորաբաժանումից բանկում գործում են նաև.

- Վարկային ռիսկերի կառավարման կոմիտե,
- Վարկերի վերլուծական ստորաբաժանում,

¹ Тавасиєв А.М., Мазурина Т.Ю., Бычков В.П. «Банковское кредитование»: Учебник / Под ред. А.М. Тавасиєва. — М: ИНФРА-М, 2010, стр. 157







² Համաձայն համապատասխան առևտրային բանկերի ինտերնետային կայքերում տեղակայված կազմակերչական կառուցվածքների և վարկային մասնագետների հետ բանավոր հետազոտությունների

- Վարկերի ձևակերպման ստորաբաժանում:

Բացի այդ անհրաժեշտ է նաև մարքեթինգային տեղեկատվություն ստանալ վարկային շուկայի վերաբերյալ: Ցանկալի է, որ դա իրականացվի մասնագիտական հիմքի վրա: Այն կարող է իրականացվել ինչպես առանձին ստորաբաժանման միջոցով, այնպես էլ կարող է ներառվել վարկային ստորաբաժանման մեջ: Հայաստանում բոլոր առևտրային բանկերում պարբերաբար (սովորաբար եռամսյակային կտրվածքով մարքեթինգային բաժինների կողմից իրականացվում է վարկային շուկայի հետազոտություն, որը բանկերին հնարավորություն է տալիս հետազոտել ֆինանսական շուկայում տեղի ունեցող փոփոխությունները և առձագանքել շուկային համընթաց):

Այժմ ներկայացնենք վարկային գործընթացին մասնակցող բանկի աշխատակիցների, մասնակիցների ֆունկցիոնալ պարտականությունները:

Որպես կանոն, հիմնական վերլուծական, կազմակերպչական, տեխնիկական աշխատանքները կապված հաճախորդների վարկավորման հետ ընկած են բանկի վարկային ստորաբաժանման վրա: Միևնույն ժամանակ վարկային գործընթացին կարող են մասնակցել բանկի այլ ստորաբաժանումներն ու ծառայությունները: Բանկի ստորաբաժանումները, որոնք մասնակցում են վարկավորման գործընթացին ունեն հետևյալ պարտականությունները՝ աջակցություն վարկային գործընթացին, վարկային գործառնությունների հաշվառում, իրավական, անվտանգության, դրամարկղային, ռիսկերի կառավարման, արժեքների պահպանման ստորաբաժանումներ, որոնք իրականացնում են տարաբնույթ գործառնություններ, գործարքներ արժեթղթերի հետ և այլն:


- 
 - Պոտենցիալ փոխառուներից փաստաթղթերի ստացում և դրանց վերանայում ու քննարկում, եզրակացության տրամադրում համապատասխան ժամանակահատվածում
 - Վարկային փաստաթղթերի կազմում, դրանց ամբողջական վերլուծություն
- 
 - Վարկունակության և վճարունակության գնահատում
 - Վարկի ապահովվածության ստուգում և գնահատում
 - Փոխառուի հետ վարկային պայմանների որոշում
- 
 - Վարկային փաստաթղթերի ձևակերպում և դրանց փոխանցում հաշվապահության բաժին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրամարկղային բաժին
 - Վարկային պայմանագրի կնքում
- 
 - Վարկառուից վճարային փաստաթղթերի ստացում, որոնց հիման վրա կհաստատվի ստացված վարկային միջոցների օգտագործման նպատակայնությունը
 - Գրավի առարկայի փոխանցում բանկային պահոց (եբբ փոխառուն վարկի ապահովվածության համար տրամադրում է արժեթղթեր և կամ թանկարժեք մետաղներ, որի համար կնքվում է համապատասխան գրավի պայմանագիր)
- 
 - Վարկային պատմության կազմում և փոփոխությունների կատարում
 - Վարկառուին իր հաշվի վերաբերյալ քաղվածքների տրամադրում
- 
 - Վարկային պորտֆելի վերաբերյալ հաշվետվության պատրաստում, ժամկետանց պարտքերը մարելուն ուղղված միջոցների ձեռնարկում և այլն
- 
 - Փոխառուի ֆինանսական վիճակի վերլուծություն և գնահատում վարկային պայմանագրի ողջ ընթացքում
 - Ռիսկերի գնահատում և մոնիթորինգ, վարկերի որակի գնահատում, որի նպատակն է այն համապատասխանացնել նորմատիվային պահանջներին և ներքին կանոնակարգերին

Գծապատկեր 1. Վարկային բաժնի ֆունկցիոնալ պարտականությունները


Վարկային ստորաբաժանումը ուսումնասիրում է դիմում-հայտը համապատասխան ժամանակահատվածում (այն բանից հետո, երբ փոխառուից ստանում է համապատասխան փաստաթղթերը): Հայտի ուսումնասիրության փուլում վարկային մասնագետը կարող է համագործակցել հետևյալ ստորաբաժանումներից մեկի կամ մի քանիսի հետ՝

- Վերլուծություն և ռիսկերի կառավարման ստորաբաժանում,
- Տնտեսական անվտանգության ստորաբաժանում,
- Իրավական ստորաբաժանում,
- Այլ ստորաբաժանումներ (անհրաժեշտության դեպքում):


Վարկային ստորաբաժանման բոլոր գործողությունները պետք է իրականացվեն յուրաքանչյուր գործառույթի համար նախատեսված համապատասխան ժամանակահատվածում:



▪ Փոխառուի փաստաթղթերի ճշտության վերլուծություն, երաշխիքի, երաշխավորի, գրավատուի իրավական կարգավիճակի վերլուծություն, ստորագրվող պայմանագրերի, կնքվող փաստաթղթերի իրավական նորմերին համապատասխանության ստուգում, այդ թվում նաև գործարքների իրականացման պահին



▪ Վարկային փաստաթղթերի համապատասխանեցում բանկի ներքին կանոնակարգերին, թերի փաստաթղթերի բացահայտում



▪ Խնդիրների առաջացման կամ ժամկետանց վարկերի դեպքում իրավական գործողությունների իրականացում
 ▪ Իրավական խորհրդատվության իրականացում բանկի մյուս ստորաբաժանումների հետ հարցերի, խնդիրների առաջացման դեպքում վարկերի հետ կապված և այլն

Գծապատկեր 2. Իրավաբանական բաժնի ֆունկցիոնալ պարտականությունները

Վարկային մասնագետը **իրավաբանական ստորաբաժանմանը** պետք է տրամադրի դիմումների պատճենները, հիմնադիր փաստաթղթերը և այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են վարկառուի և նրա ներկայացուցիչների իրավունակությունը: Իրավաբանական ստորաբաժանումը փաստաթղթերը ստանալուց հետո համապատասխան ժամանակահատվածում պետք է ստուգի դրանց իրավա-

կան ճշտությունը, վարկառուի հետ կապված անձանց լիազորությունները և վարկային ստորաբաժանմանը տրամադրի դրանց ճշտության և անհրաժեշտության դեպքում դրանց ձևակերպման վերաբերյալ գրավոր եզրակացություն: Փաստաթղթերում թերությունների բացակայության դեպքում, ինչը հաստատում է վարկառուի և իր ներկայացուցիչների (երաշխավոր, գրավատու) իրավունակությունը, իրավաբանական ստորաբաժանման առաջարկությունների հետ մեկտեղ ուղարկվում է վարկային ստորաբաժանում:

Վարկային ստորաբաժանման աշխատակիցը վերլուծում և ամփոփում է ստացված տվյալները և, համաձայն բանկի ներքին կանոնակարգերի և վարկային քաղաքականությանը, վարկային գործի վերաբերյալ կազմում է եզրակացություն: Վարկային ստորաբաժանման աշխատակցի եզրակացությունը, որպես կանոն, ստորագրվում է այդ ստորաբաժանման ղեկավարի կողմից: Վարկային փաթեթը ամբողջությամբ պատրաստ լինելուց հետո այն ներկայացվում է բանկի **վարկային կոմիտեի** մոտակա նիստի ժամանակ: Գործի ուսումնասիրվում և քննարկվում է վարկային կոմիտեի ժամանակ և կայացվում որոշում վարկը տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ: Վարկային կոմիտեի կողմից տրված եզրակացությունը որպես կանոն կազմվում է բանկի ստանդարտներին համապատասխան և իր մեջ ներառում է հետևյալ կետերը.

✓ Ընդհանուր տեղեկություններ պոտենցիալ վարկառուի վերաբերյալ (անունը/անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական և փաստացի հասցեները, պետական գրանցման վկայականը, գործունեության ոլորտը, կապիտալի չափը և կառուցվածքը, մասնակիցները, դուստր և կախյալ ընկերությունների առկայությունը),

✓ Տնտեսական անվտանգության ծառայության, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բանկի իրավաբանական ստորաբաժանման եզրակացությունը,

✓ Վարկավորման պայմանները,

✓ Պոտենցիալ վարկառուի ընդհանուր տնտեսական բնութագիրը (շուկայում նրա ունեցած դիրքը, արտադրական հնարավորությունները, հաշվետու ժամանակածրջանում արտադրված արտադրանքի ծավալը),

✓ Փոխառուի ֆինանսական վիճակի վերլուծություն, այդ թվում`
o Ակտիվների կառուցվածքի և դրանց ձևավորման աղբյուրների վերլուծություն,

o Հաշվապահական հաշվեկշռի և ակտիվների որակի վերլուծություն,

o Զուտ ակտիվների և սեփական միջոցների որակի վերլուծություն,

○ Կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունների վերլուծություն ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում՝ դրանց առաջացման պատճառները և վերացնելու ուղիները,


○ Ֆինանսական գործունեության վերլուծություն, կորուստների առկայության դեպքում դրանց գոյացման պատճառների վերլուծություն, գործակիցների հաշվարկ և վարկունակության կարգի որոշում՝ ստանդարտներին համապատասխան, որոնք առկա են բանկի վարկային կանոնակարգում,

○ Պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակի և դրա փոփոխման միտումների մասին եզրակացության կազմում:


✓ Վարկառուի վարկային պատմությունը,

✓ Փոխառուի հաշիվների շրջանառության վերլուծություն, այդ թվում տվյալ բանկի:


✓ Բիզնես պլանի վերլուծություն (եթե առկա է):



▪ Փոխառուի վարկային պատմության պարզաբանում, վարկառուի գործունեության բնույթի ստուգում, բիզնես հեղինակության, երաշխավորի և նրանց ղեկավարության ինչպես նաև հնարավոր է նրանց գործընկերների վերաբերյալ տեղեկատվության հավաքում բացասական երևույթներից խուսափելու համար, ինչպես նաև վերջիններիս վերաբերյալ համապատասխան եզրակացության կազմում



▪ Վարկառուի երաշխավորների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ մինչև վարկի մարման ժամկետների ավարտը




▪ Խնդրահարույց վարկերի առաջացման դեպքում դրանց վերականգնմանն ուղղված համապատասխան գործողությունների

Գծապատկեր 3. Անվտանգության բաժնի ֆունկցիոնալ պարտականությունները


Տնտեսական անվտանգության ստորաբաժանմանը ուսումնասիրության նպատակով անհրաժեշտ է տրամադրել դիմում-հայտի պատճեն և փոխառուի այլ փաստաթղթեր: Բացի այդ, այս ստորա-

բաժանմանը կարող են տրամադրվել նաև այլ փաստաթղթեր, այդ թվում նաև իրավակարգավորող, վարկային պայմանագրերը և այլ փաստաթղթեր, որոնք երաշխավորում են տվյալ անձի իրական լինելը: Անհրաժեշտության դեպքում տնտեսական անվտանգության ստորաբաժանումը կարող է պահանջել վարկառուի երաշխավորների և գրավատուների վերաբերյալ փաստաթղթեր:


Անվտանգության ստորաբաժանումը, կապված վարկառուի գործունեության և գործնական հեղինակության հետ, սահմանված ժամանակահատվածում վարկային ստորաբաժանմանը պետք է ներկայացնի գրավոր եզրակացություն բացասական տեղեկատվության առկայության կամ դրա բացակայության մասին:




- Վարկային հաշիվների բացում և վարում, վարկային միջոցների փոխանցում համապատասխան հաշիվների վրա, վարկային գումարի դուրս գրում վարկառուի հաշվից նրա օգտագործմանը դուգահեռ, չվճարված գումարների, տոկոսների արտացոլում ժամկետանց վարկային հաշիվներում
- Վարկային հաշվեհամարների ամրագրում վարկային ստորաբաժանման հրամանով և համապատասխան տեղեկատվության տրամադրում վարկային բաժնի



- Վարկային ստորաբաժանմանը ժամանակին տեղեկացում փոխառուի հաշվին մուտք գործած ինկասոների և երրորդ անձանց կողմից վճարային պահանջների վերաբերյալ
- Համաձայն երաշխիքային պայմանագրի անուղակի ձևով միջոցների դուրսգրում բանկի ժամկետանց պարտավորությունները մարելու համար
- Ամենօրյա քաղվածքների ձևակերպում վարկառուի անձնական հաշիվների հիման վրա և դրանց ուղղարկում վարկային ստորաբաժանում







- Վերահսկողություն գումարների ճիշտ հաշվարկների և դրանց վճարման և վարկառուին դրա վերաբերյալ ծանուցումների ուղղարկման համար
- Պարտավորությունների մարմանն ուղղված միջոցների հաշվառում



- Վարկային գործընթացի հաջորդական վերահսկողություն
- Վարկի մարման հետ կապված խնդիրների առաջ գալու դեպքում որոշակի գործունեության իրականացում՝ համաձայն ներքին կանոնակարգերի (բանկի մնացած շահագրգիռ կողմերի հետ միասին)

Գծապատկեր 4. Հաշվապահական բաժնի ֆունկցիոնալ պարտականությունները

Վարկը հաստատվելուց հետո վարկային մասնագետը մուտքագրում է հաճախորդի մասին տվյալները համակարգչային ծրագիր, որով իրականացվում է հաշվառումը (Հայաստանում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մեծամասնությունը օգտագործում են Հայկական Ծրագրեր Բանկ ծրագիրը), որից հետո դիմում հաշվապահական բաժին՝ վարկառուի համար հաշիվներ բացելու համար: Հաշվապահական ստորաբաժանումը ապահովում է վարկային գործողությունների հաշվառումը, ինչը իրականացվում է վարկ տալու պահից սկսած մինչև վարկի մարումը:

- 
 - Վարկային ռիսկերի կատեգորիաների և սահմանների, ինչպես նաև դրանց փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում վարկային ստորաբաժանմանը
- 
 - Ֆիզիկական անձ և կորպորատիվ հաճախորդների խմբերի վերաբերյալ ռիսկերի մասին տեղեկատվության տրամադրում վարկային բաժին
- 
 - Վարկային ռիսկի կատեգորիաների և որոշակի սահմանափակումների իրականացումը վարկային ստորաբաժանման պատվերով
- 
 - Սահմանված սահմանափակումների և այլնի նկատմամբ վերահսկողություն, որոնք մտնում են ռիսկերի կառավարման լիազորությունների մեջ՝ բանկի նորմատիվային փաստաթղթերին համապատասխան

Գծապատկեր 5. Ռիսկերի վերլուծության և կառավարման ստորաբաժանման ֆունկցիոնալ պարտականությունները

Բոլոր ստորաբաժանումների լիազորություններն ու ընթացակարգերը, որոնք մասնակցում են վարկային գործընթացին, նրանց ղեկավարների և աշխատակիցների պարտավորությունները և նրանց նկատմամբ պահանջները պետք է մանրամասն ամրագրված լինեն վարկատու կազմակերպության ներքին փաստաթղթերում:




Գծապատկեր 6. Բանկի տարբեր ստորաբաժանումների միջև կապը³

Թերևս բանկային գործունեության կազմակերպման մեջ ամենաբարդը՝ դա հաստատել ռազիոնալ, արդյունավետ և տնտեսական համագործակցություն բանկի ստորաբաժանումների միջև և առաջին հերթին նրանց միջև, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են վարկային գործընթացին: Այսպիսի տնտեսա-կազմակերպչական խնդիրները դեռևս բավարար ուսումնասիրված չեն և յուրաքանչյուր բանկ այս խնդիրները լուծում է իր ճանապարհով՝ փորձերի հիման վրա, այսինքն էմպիրիկ ճանապարհով: Բանկի ստորաբաժանումների միջև սերտ համագործակցությունը կբարձրացնի վարկավորման արդյունավետությունը, կնվազեցնի խնդրահարույց

³ Բոլոր մեջբերված գծապատկերները կազմված են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով մասնագիտական գրականությունը և ՀՀ առևտրային բանկերի համապատասխան մասնագետների հետ իրականացված հարցազրույցների արդյունքներով կազմված հետազոտությունները

վարկերի տեսակարար կշիռը, ինչը բանկերում ամենատարածված ռիսկն է համարվում: Արդյունքում առաջարկվում է ՀՀ առևտրային բանկերին հաշվի առնելով տարբեր ստորաբաժանումների ֆունկցիոնալ պարտականությունները՝ ստեղծել փորձաքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների փոխազդեցության սխեմա: Մասնավորապես յուրաքանչյուր վարկավորման ընթացակարգին կից անհրաժեշտ է սահմանել վարկային փաթեթի փորձաքննությունը, որտեղ կներառվի վարկային փաթեթի հոսքը մի բաժնից մյուսը՝ ըստ հերթականության և յուրաքանչյուր ստորաբաժանման մաքսիմալ ժամանակահատվածը փաթեթը ուսումնասիրելու համար: Վարկային փաթեթին կից անհրաժեշտ է կազմել ուղեկցման թերթիկ, որտեղ յուրաքանչյուր ստորաբաժանման մասնագետ, ով ուսումնասիրել է փաթեթը, էլեկտրոնային ստորագրելով ուղարկի հաջորդ ստորաբաժանում, կամ հետ ուղարկի վարկային բաժին լրամշակման (գծապատկեր 7-ում ներկայացված է առևտրային վարկավորման տիպային հերթականություն պատկերող գծապատկեր)



Գծապատկեր 7. Վարկավորման հերթափոխության տիպային օրինակ⁴

Վարկավորման գործընթացի ընթացքում բանկի ստորաբաժանումների միջև փոխհարաբերությունների հերթականությունն ու սխեման պետք է արտացոլվեն բանկի համապատասխան ներքին փաստաթղթերում, որոնք կարգավորում են վարկավորման ողջ գործընթացը: Նման հերթականությունը իմաստ ունի իրականացնել փոխառուների տարբեր կատեգորիաների համար՝ ֆիզիկական անձանց, կորպորատիվ հաճախորդների, անհատ ձեռներեցների, փոքր և միջին բիզնեսի:

Գրականություն

1. Մխիթարյան Ա., Սահակյան Ռ. «Վարկի մենեջմենթ», «Լիմուշ» հրատ., Եր, 2013, 255 էջ
2. Тавасиев А.М., Мазурина Т.Ю., Бычков В.П. "Банковское кредитование": Учебник / Под ред. А.М. Тавасиева. — М: ИНФРА-М, 2010. — 656 с.

⁴ Կախված առևտրային վարկի տարատեսակից (մանրածախ առևտրային վարկավորում, ՓՄՁ վարկավորում, միկրովարկեր, խոշոր առևտրային վարկեր) վարկային փաթեթի հոսքը կարելի է կրճատել՝ ելնելով ռիսկայնության աստիճանից և վարկավորման ժամկետի օպտիմալացման անհրաժեշտությունից:

3. Բեօթեի Գ. Ա., «Անթիպեի անի: օրագիր օրագիր», 1 ինքն, Անի և Ի ան, 2005 թ., 432 թիվ.
4. Жуков Е.Ф. "Банковский менеджмент". Учебник для студентов вузов, обучающихся по экономическим специальностям - Москва: ЮНИТИ-ДАНА, 2007.- 255 с.
5. Peter S. Rose, Sylvia C. Hudgins "Bank management and financial services", seventh edition, McGraw publ, 2008, 752 pages
6. Eric Lamarque "Management de la banque", Pearson Editeur, 2011, 288 pages
7. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայք: www.cba.am

ANNOTATION

Արամ Մխիտարյան, *կ.է.ն., դոցենտ*
ԱԳԷՄ

ОРГАНИЗАЦИОННОЕ ОБЕСПЕЧЕНИЕ КРЕДИТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КОММЕРЧЕСКОГО БАНКА

Ключевые слова: банковское дело, кредитный отдел, процесс кредитования, риски, сотрудничество, клиент

В статье рассматриваются различные способы и особенности кредитования, внедрения и развития различных методов кредитования. Качество и эффективность кредитного процесса зависят прежде всего от того, насколько правильно он построен с учетом особенностей функционирования каждого конкретного банка: его размера, структуры, специализации и условий работы.

АННОТАЦИЯ

Aram Mkhitaryan, *PhD, Associate Professor*
ASUE

ORGANIZATIONAL ENSURING OF CREDIT ACTIVITY OF COMMERCIAL BANKS

Keywords: banking activity« credit department« credit procedure, risks« cooperation, client

In article various ways and features of crediting, introduction and development of various methods of crediting are considered. Quality and efficiency of credit process depend first of all on that, how correctly it is constructed taking into account features of functioning of each concrete bank: its size, structure, specialization and working conditions.